ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 8

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *յ*.**

1) բար-ացակամ, արքա-որդի, լռելյա-ն, կաթսա-ատուն
2) պատան-ակ, սերմացու-ի, միլ-ոն, մարմար-ա
3) ռնգեղջ-ուր, դշխո-ական, ակաց-ա, Ամալ-ա
4) այծ-ամ, ջղա-ին, բրաբ-ոն, ժողովածու-ում

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով.**

1) յոթից (ութ), նազիր (վեզիր), մրցույթ (փառատոն), մուշ (մուշ)
2) մեն (մենակ), մերթ (մերթ), համով (հոտով), հույն (թուրքական)
3) դեմ (հանդիման), հյուսիս (արևելք), հլու (հնազանդ), հուր (հեր)
4) ոչ (օրինական), ոլոր (մոլոր), ներկա (բացակա), շատից (քչից)

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) երկրորդ բաղադրիչներն են գրվում *փոքրատառով*.**

1) ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ
2) ԹԱԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼ, ՀՈԲ ԵՐԱՆԵԼԻ, ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՉԵՐԴ ԲԱՐԵՃՆՈՒԹՅՈՒՆ
3) «ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆ» ՇՔԱՆՇԱՆ, ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ, ՅԱՐՈՍԼԱՎ ԻՄԱՍՏՈՒՆ
4) ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿՈՉՈՒՄ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԴԻՆԱՍՏԻԱ, ԽԱՄԱՃԻԿՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

4 **Տրված բառերից քանիսո՞ւմ ածանցի հնչյունափոխություն կա.**

թռչնաբուծարան, փորագրություն, աներևութանալ, կցակառույց, նկարչություն, նախադրություն, միջնաբերդ, բուժօգնություն, փախստական, պատվարժան:

1) չորսում
2) հինգում
3) վեցում
4) երեքում

5 **Տրված բառերից քանի՞սն են հոմանիշ *փառաբանել* բառին.**

ներբողել, նպաստել, գովաբանել, օժանդակել, օրհներգել, սատարել, բարեբանել, աջակցել, դրվատել, գովերգել:

1) հինգը
2) վեցը
3) չորսը
4) յոթը

6 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ *չկա:***

1) Քանի որ հայրս ուրախ խառնվածք ուներ, միշտ իր խոսքով գերում էր սեղանակիցներին:
2) Աղ կերած պանրից ու թոնրի լավաշից ո՞վ կհրաժարվի:
3) Բոցի լեզուները մի ակնթարթում ոչնչացրին ամեն ինչ:
4) Շիկացած լավան անմիջապես տարածվեց բլուրն ի վար:

7 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Բազմազբաղ լինելու պատճառով ընկերս հազվագյուտ է ամառանոց գալիս:
2) Կողմերի անպատասխանատվության և անփութության հետևանքով այդքան կարևոր պայմանագիրը լուծարվեց:
3) Ցոփ ու շվայտ կյանքով ապրող որդիները վերջնականապես սնանկացրին իրենց հորը:
4) Ֆիզիկոսը Օքսֆորդի համալսարանից հրավեր էր ստացել մասնակցելու միջազգային գիտաժողովին:

8 **Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ *-ունք* վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

պարապություն, ծաղկավաճառ, բուրավետ, մասնագետ, կնամեծար, գարնանացան, զգայարան, ականապատ, մանրավաճառ, բարձրատոհմիկ:

1) երեքի
2) չորսի
3) հինգի
4) երկուսի

9 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) տոհմածառեր, հենապյուներ, թոռնատերեր, քղանցքներ
2) հակինթաշարեր, լապտերավառեր, կողմնացույցներ, նավթամուղներ
3) զորաերթեր, շտաբներ, բելառուսներ, ցուցամոլներ
4) հավատարմագրեր, ծաղկատոներ, կիզակետեր, գետեզրեր

10 **Ո՞ր նախադասության մեջ գերադրական աստիճանով դրված ածական կա:**

1) Հետագայում պարզվեց, որ ատոմը նյութի մանրագույն մասնիկը չէ:
2) Ճարտասանը իր խոսքը ավարտեց՝ աջակիցներին խորին շնորհակալություն հայտնելով:
3) Սիրտս ողողվում է մի անհուն ջերմությամբ, երբ հիշում եմ քույրերիս:
4) Իսահակյանից ավելի լուսավոր տաղանդ այժմ ողջ Եվրոպայում չկա:

11 **Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ *չկա:***

1) Եվ տեսնում էի՝ զմրուխտ շորերով
   Մի նավ էր սահում օրոր ու շորոր:
2) Հայրենի գետի զմրուխտ ափերին
   Մեր հին տնակն է կքել մենավոր:
3) Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր
   Կերտել են շքեղ կոթողներ հավերժ:
4) Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան,
   Նորից թովում է ինձ ոսկե հեռուն:

12 **Տարբերակներից քանիսո՞ւմ ենթադրական եղանակի բայաձև կա:**

- Ու չի ելնի մոխիրից տխուր հմայքը
  ձեր տան,
  Ու չի լինի էլ սիրո քաղցր ու կապույտ
  ձեր շղթան:
- Իմ ճամփան անվախճան մի գիշեր,
  Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա:
- Հետևում են քեզ, երբ արյուն ունես,
  Իսկ երբ ցամաքես, կմոռանան քեզ:
- Չի զիջել նա իր արմատը վերջին
  Արհավիրքների զարկին անխնա:

1) երկուսում
2) երեքում
3) չորսում
4) մեկում

13 **Տրված բառերից քանի՞սն են մակբայ.**

այստեղ, որտեղ, բազմիցս, միառժամանակ, այսքան, ինչքան, վաղուց ի վեր, տեղնուտեղը, ամենուրեք, ինչպես:

1) վեցը
2) հինգը
3) բոլորը
4) ութը

14 **Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

1) Մենք մտածեցինք, թե արդեն լուսացել է:
2) Երբ առավոտյան դուրս էր գալիս և կանգնում բակում, բազմաթիվ աչքեր հիացած նայում էին նրան:
3) Կարծում ես՝ դեռ շա՞տ ժամանակ կա:
4) Լավ գիտեր, որ այդպես վարվելու իրավունք չունի:

15 **Ո՞ր տարբերակում բաղադրյալ ստորոգյալ *չկա:***

1) Ասում էր, որ արդեն ուրախ է և հանգիստ:
2) Նա կարոտ էր բարի խոսքի, ջերմ վերաբերմունքի և արժանի էր գնահատվելու:
3) Վերջապես ձեռք բերեցինք նոր դասագրքերը և պիտի բարեխղճորեն պատրաստվենք քննություններին:
4) Նրա համար թանկ էին ընկերոջ դեմքը, ձայնն ու քայլվածքը, անգամ սովորություններն ու բնավորությունը:

16 **Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված խնդիր կա:**

1) Մոտենում է ներկաներից յուրաքանչյուրին և բարևում:
2) Չէր խորշում ոչ ոքից և ոչնչից:
3) Ու նայում է Վարագա սարը անսասան պահապանի պես:
4) Տեսա երազ մի վառ,
   Ոսկի մի դուռ տեսա…

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Ռուզանը չգիտեր՝ ինչ է ստեղծագործելը, չէր հավատում, որ կան մարդիկ, որոնց ուղեղի ծալքերում գեղեցիկ գանձի նման թանկարժեք բան է լինում թաքնված:



18 **Նախադասություններից քանիսո՞ւմ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- Օգնի՛ր նրան, ով կարիքն ունի քո օգնության:
- Հանկարծ հիշեցի փոքրիկ տղային, որը փայլում էր իր արտասովոր ընդունակություններով:
- Նրանք, ովքեր պայքարում են սփյուռքում հայի հայ մնալու համար, արժանի են դրվատանքի:
- Եկավ նա, ում բոլորը կարոտով սպասում էին:

1) երեքում
2) երկուսում
3) մեկում
4) բոլորում

19 **Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Ստվար և հզոր բանակի գլուխն անցած փառատենչ իշխանը հարձակվում է մի թագավորությունից մյուսի վրա:

1) Փառատենչ իշխանը, որ ստվար և հզոր բանակի գլուխն էր անցել, հարձակվում է մի թագավորությունից մյուսի վրա:
2) Մի թագավորության փառատենչ իշխանը, որ ստվար և հզոր բանակի գլուխն էր անցել, հարձակվում է մյուսի վրա:
3) Փառատենչ իշխանը անցել էր ստվար և հզոր բանակի գլուխը, որպեսզի հարձակվեր մի թագավորությունից մյուսի վրա:
4) Փառատենչ իշխանը, որ մի թագավորությունից մյուսի վրա էր հարձակվել, ստվար և հզոր բանակի գլուխն է անցնում:

20 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Մի գիշեր՝ մի քամոտ գիշեր, սարերից անսանձ փչում էր քամին, ծեծում դուռն ու պատուհանները:
- Օր ու գիշեր ճանապարհ կտրելով՝ անապատների տատասկներից գզգզված՝ հասավ նա մի օր քաղաքի պարիսպներին:
- Դրսում վառեցին խարույկները՝ ցլերին ողջակիզելու, սակայն, մրրկաշունչ հողմ բարձրացավ, և բոցերը հանգան:
- Տաքանում էի՝ հիացած աչքերս չհեռացնելով այդ երկնային գեղեցկությունից, երբ զգացի մի քաղցր հոտ՝ մինչ այդ անծանոթ մարդկային հոտոտելիքին:
- Չանցած մի պահ՝ նորից սկսեց երգել սոխակը՝ հաղթական երգիչը:

1) երեքում
2) չորսում
3) հինգում
4) մեկում

21 **Ո՞ր հայերենով է տրված հատվածը:**

Իրիկվան մեջ, գյուղին քով,
Կմրմնջե գուռն ուռիին տակ շքեղ:
Ջայն կլեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
Աստղը՝ բյուրեղ արցունքով:

1) արևմտահայերեն
2) գրաբար
3) միջին հայերեն
4) արևելահայերեն

22 **Ո՞ւմ մասին է.**

«Նա սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, թե ալեկոծված նավն շտապում է դեպի նավահանգիստը, իսկ ժուժկալող մարդը անապատ է փնտրում: …Գնում է Գողթն գավառը և ապրում մենակյացի կյանքով»:

1) Սամվելի («Սամվել», Ռաֆֆի)
2) Մեսրոպ Մաշտոցի («Հայոց պատմություն», Մովսես Խորենացի)
3) Վանահոր («Հին աստվածներ», Լևոն Շանթ)
4) Ասպրամի («Գևորգ Մարզպետունի», Մուրացան)

23 **Հեղինակներից քանի՞սն են ապրել ու ստեղծագործել Գրիգոր Նարեկացուց հետո:**

- Ագաթանգեղոս
- Սայաթ-Նովա
- Նահապետ Քուչակ
- Ֆրիկ

1) երկուսը
2) երեքը
3) բոլորը
4) մեկը

24 **Հովհաննես Թումանյանի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ
Աշխարհքի վրրա, Ջավախքի վրրա,
Ավերակ բերդին, սև ամպի նըման,
Ծուխն ու թըշնամին չոքել են ահա:

1) «Փարվանա»
2) «Անուշ»
3) «Հայրենիքիս հետ»
4) «Թմկաբերդի առումը»

25 **Պնդումներից ո՞րն է սխալ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:**

1) Սիրած աղջկա զգեստի շրշյունն անգամ հասնում է պատանուն, մաշում նրա սիրտը:
2) Բանաստեղծության տողերում երևում է հիվանդությունից ընկճված հուսահատ պատանին:
3) Մարդկային տառապանքին զուգորդվող լճակը ներկայացված է բնական մանրամասներով:
4) Նրանում լսվում են շրջապատի մարդկանց դառը խոսքերը բանաստեղծի խեղճ արտաքինի ու սրտի ցավի մասին:

26 **Դանիել Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ ո՞ր պնդումը ճիշտ *չէ:***

1) «Հացին երգը» ժողովածուն առանձին գրքով լույս է տեսել 1921 թվականին:
2) «Հունձք կը ժողվեմ…» և «Ձոն» բանաստեղծություններն ընդգրկված են «Հացին երգը» ժողովածուում:
3) «Ձոն» բանաստեղծության մեջ Դ. Վարուժանն օգտագործել է Վահագնի առասպելի ոճական որոշ հնարքներ:
4) Դ. Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն լույս է տեսել 1912 թվականին. այն բաղկացած է երկու ենթաշարքից՝ «Հեթանոս երգեր», «Գողգոթայի ծաղիկներ», և «Հարճը» պոեմից:

27 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

1. Առկայծում են կարոտագին, երազուն
2. Այն աստղերը՝ որպես մոմեր սրբազան
3. Մեղմ գիշերի գեղագանգուր երազում
4. Հավերժաբար իրար կապված և բաժան

1) 2, 3, 4, 1
2) 2, 4, 3, 1
3) 2, 4, 1, 3
4) 3, 2, 1, 4

28 **Եղիշե Չարենցի ո՞ր ստեղծագործությունն է ավարտվում հետևյալ տողերով:**

Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
- Մենք կժպտանք, գո՜հ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք…

1) «Տաղ անձնական»
2) «Դանթեական առասպել»
3) «Հարդագողի ճամփորդները»
4) «Մահվան տեսիլ»

29 **Ձախ կողմում նշված են Ակսել Բակունցի պատմվածքները, իսկ աջում՝ նրանցից քաղված մեկական հատված. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:**

ա. «Սպիտակ ձին»
բ. «Ալպիական մանուշակ»
գ. «Միրհավ»
դ. «Խոնարհ աղջիկը»

1. «Նրանք մանկության ընկերներ էին, և նրանց սերը ծնվել էր նույնքան աննկատ, ինչպես մի գիշերում բացվում է մուգ մանուշակը»:
2. «Մեկ էլ դեմքը մոտենում էր, կանգնում էր աչքիս առաջ, և ես ճգնում էի իմանալու՝ ժպտա՞ց աղջիկը, երբ ետ նայեցի, թե՞ միայն ինձ թվաց»:
3. «Ցոլակը դողում էր: Նրա մեջքի աջ կողմը ափսեի չափ վերք էր բացվել և երևում էր կարմիր, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճքած միսը»:
4. «Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թավիշե գլխարկով գլուխ՝ մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ՝ թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ»:

1) ա-3, բ-4, գ-1, դ-2
2) ա-2, բ-4, գ-3, դ-1
3) ա-2, բ-3, գ-1, դ-4
4) ա-3, բ-1, գ-4, դ-2

30 **Ո՞ր պնդումը ճիշտ *չէ* Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի վերաբերյալ:**

1) Հեղինակի կարծիքով ազգապահպանության հիմքը ընտանիքն է, որի քայքայումից էլ սկսվում է ազգայինի կորուստը:
2) Շահնուրին մտահոգում է ոչ միայն հայության ներկան, այլև ապագան. չէ՞ որ ձուլման ճանապարհը բռնած վաղվա սերունդը այլևս հայ չի լինի:
3) Շահնուրի հերոսները սիրում են իրենց հայրենիքը, բայց օտար հողում ապրում են երջանիկ:
4) Վեպում Շահնուրը բարձրացնում է հայերի ձուլման, ազգային գաղափարներից նահանջելու խնդիրը:

31 **Ո՞ր հատվածն է Պարույր Սևակի «Վարք մեծաց» բանաստեղծությունից:**

1) Դու, որ սայթաքել ու վայր ես ընկել,
   Ընկել ես, սակայն երբեք չես ծնկել…
2) Սերում են նրանք և այն ծերուկից,
   Որ նախընտրում էր ապրել տակառում:
3) Նա օտար հրի ճարակի դիմաց
   Մեր ինքնությունը կոփեց ու կռեց…
4) Նրանք ծնվում են իրենց ծնողի անօգնությունից,
   Որպեսզի դառնան նոր զորեղություն:

32 **Ո՞ր պնդումն է սխալ:**

1) Ակսել Բակունցն ու Պետրոս Դուրյանը 19-րդ դարի հեղինակներ են:
2) Հովհաննես Շիրազն ու Համո Սահյանը ապրել և ստեղծագործել են 20-րդ դարում:
3) Եղիշե Չարենցը նորագույն շրջանի հայ գրականության սկզբնավորողն է:
4) Մովսես Խորենացին և Եղիշեն 5-րդ դարի պատմիչներ են:

33 **Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.**

կիզակետ, գրաստ, այլախոհ, գարեհաց, նամակարկղ, սառցալեռ, բառապաշար, զինակից, խաղաքայլ, ամենագետ:

34 **Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Քամին հալածում է մառախուղի թանձր քուլաները: Մառախուղի փեշերից ցցվում են պղնձագույն ժայռերի հինավուրց գագաթները: Քարափոր տների երդիկներից կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը:

Գարնան մթնկա գիշերներին ջրի վշշոցը ահարկու սարսափ է տարածում գետափի տներում, ձորերում: Մթության մեջ առկայծող աստղերը կախարդական կանթեղներ են թվում:

35 **Տրված բառերից քանիսո՞ւմ է գրվում միայն *ռ*.**

-ստան, արջա-րս, սակրա-ր, կապա-ր, ենթա-րովայնային, դիմա-ր, ան-ղնաշարավոր, երկ-րյակ, -լգա, -լտեր, բան-ր, -ճաբան:

36 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.**

շրջադասություն, մակդիր, չափազանցություն, համեմատություն, փոխաբերություն:

Թափառում ենք փողոցներում՝
Ես քո սիրով, դու՝ ուրիշի,
Այրվում ենք մենք հրդեհներում՝
Ես քո հրով, դու՝ ուրիշի:
Կարոտում ենք, խնդում, տխրում՝
Ես քո սիրով, դու՝ ուրիշի:
Է՜հ, ինչ արած, բախտը խռով
Թող աշխարհում մեզ չհիշի,
Միայն ապրենք մենք սիրելո՛վ,
Թեկուզ ես՝ քեզ, դու՝ ուրիշի:

37 **Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:**

Թութանհամոնը գինու սիրահար է եղել. այսպիսի եզրահանգման են եկել փարավոնին ուսումնասիրած գիտնականները՝ հաշվի առնելով և այն հանգամանքը, որ Եգիպտոսում գինին համարվել է բացառիկ ըմպելիք: Գտնված շշերի վրա եղել են մանրակրկիտ տեղեկություններ հարուստ բերքի մասին և խաղողագործի անունը:

38 **Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Նա առաջարկություն էր արել նրան և պնդել, որ նրա մասին ասվածները բանսարկուների անհեթեթ բամբասանքներ են, և խնամքով թաքցնել էր փորձում Էմմայի նողկալի արարքը:

39 **Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. դանակ, 2. մրցավար, 3. տարադրամ, 4. զորեղ, 5. գործարար, 6. դիպակ, 7. ուղեղ, 8. ցայգ, 9. դիմակ:

40 **Նշել այն բառերի համարները, որոնցում երկհնչյունի հնչյունափոխություն կա.**

1. պաճուճանք, 2. լռակյաց, 3. մահագուշակ, 4. արևմտահայ, 5. ծուլամիտ, 6. ջերմամեկուսիչ, 7. կուսակից, 8. չարագույժ, 9. հաճոյախոս:

41 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում և-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1. Շիկնեցին Մեծ ու Փոքր Մասիսների գագաթները և երկնքի կանաչ-կապույտը ժպտաց վաղորդայնի շողերով: 2. Արաքսը սրընթաց դեպի Շարուրի դաշտն էր տանում իր ջրերը լափլիզելով աջ ու ձախ կողմերի քարակարկառները և տեղ-տեղ ողողում ափամերձ տարածքները: 3. Դաշտավայրը գրկաբաց ողջունում էր հանապազօրյա կյանքին և այստեղ-այնտեղ սլացիկ բարդիների արանքներից դեպի երկինք էին ոլորվում ծխի կապույտ ժապավենները: 4. Արաքսի ափին այգեստանների ծոցում առավոտն էր դիմավորում Արտաշատը և այն մատնում էր մայրաքաղաքի եռուզեռը: 5. Հարավարևմտյան մուտքի դուռը բացվել էր արդեն և երկու հասակավոր պահակներ աչքները գցել էին Արաքսի պղտոր ջրերին: 6.Դեմը ձգվում էր նեղ կամուրջը որ դիմավորում էր գետի մոլեգին հարվածներին և երևում էր գարնանային վարարումը սպառնում էր նրա քարակերտ սյուներին:

42 **Նշել այն համարները, որոնցում նշված են Վահան Տերյանի բանաստեղծությունները:**

1. «Մթնշաղի անուրջներ», 2. «Գիշեր և հուշեր», 3. «Մի՞թե վերջին պոետն եմ ես», 4. «Կարծես թե դարձել եմ ես տուն», 5. «Աշնան մեղեդի», 6. «Որպես Լաերտի որդին...», 7. «Երկիր Նաիրի», 8. «Ոսկե շղթա», 9. «Հայ գրականության գալիք օրը»:

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անկախ դերբայներ կան:**

1. Եվ գուցե պատմեր նաև մխիթարական դեպքեր, որոնք մեզ չէին ստիպի հուզվել:
2. Պիզայում հիացմունք պարգևող տեսարժան վայրեր շատ կան:
3. Տաճարը կառուցելիս Պիզան վերելք էր ապրում, և կառուցման համար ակնհայտորեն ոչինչ չեն խնայել:
4. Թվում էր՝ նա այլևս չի տեսնի իր նախնիների երկիրը:
5. Եվ միայն լուսադեմին, երբ կաթնալույսով ողողված էին երկինք ու դրախտ, Ադամը կարողացավ վերագտնել ճանապարհը:
6. Շարունակելով մեր՝ անակնկալներով հարուստ ճանապարհը՝ հետզհետե հանդիպում էինք նորանոր սքանչելիքների:

44 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

Քաղաքը, ուր անցավ իմ ոսկեծամ մանկությունը, հիմա ապրում է իմ հոգում, շատ հաճախ հուշերիս մեջ մշուշային գծերով ժպտում է ու ինձ տանում դեպի իմ հայրենի բնօրրանը:

1. **մանկությունը** – ուղիղ խնդիր, **մշուշային**– որոշիչ
2. **ժպտում է** - պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
3. **հայրենի** – որոշիչ, **դեպի բնօրրանը** – տեղի պարագա
4. **ուր** – տեղի պարագա, **անցավ** – պարզ ստորոգյալ
5. **իմ** – հատկացուցիչ, **ոսկեծամ** – որոշիչ

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Պակասավոր են ***եմ, կամ, կենալ, գալ, հուսալ*** բայերը:
2. ***Գալ, լալ, տալ*** բայերը անկանոն են միայն անցյալ կատարյալում:
3. ***Առնել*** բայն անկանոն է միայն եզակի հրամայականում:
4. Կազմությամբ պարզ են ***ասել, բերել, ուտել, զարկել, ելնել*** բայերը:
5. ***Կամ***-ը սահմանական եղանակի ապառնի ժամանակի բայաձև է:
6. Կազմությամբ ածանցավոր են ***անել, դնել, տալ, գտնել*** բայերը:

Բ մակարդակ

46 **Բառերից քանիսո՞ւմ է գրվում *ց*.**

լացակումա-, լվա-ք, խե-գետին, հանդիպակա-, լացուկո-, կաթնահուն-, ճրագալույ-, ցն-ուղ, սրդողա-, հինավուր-:

1) հինգում
2) վեցում
3) յոթում
4) իններում

47 **Ո՞ր շարքի ոչ մի բառում գաղտնավանկ *չկա.***

1) մարդկային, գանգրահեր, զննել
2) ատամնաբույժ, ամբաստանյալ, մանրահատակ
3) չմուշկ, դեղորայք, փափկամորթ
4) դասընկեր, մանրել, գրքային

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի հնչյունափոխություն կա.**

1) պատրանք, գնացուցակ, ընչազուրկ, վերստին
2) ուղեկալ, ծուլություն, աստղանիշ, մրջնաթթու
3) սրախողխող, լուսարձակ, վիրակապ, երկնասլաց
4) կոզյակ, քրտնաթոր, տրտմաշուք, բուսական

49 **Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:**

1) աշխարհից կուշտ, յոթերորդ երկնքում լինել, հորդ անձրև
2) ծեր աղվես, բախտ վիճակվել, կանխիկ վճարել
3) սիրտը առնել, աչքաթող անել, գիրք թերթել
4) աչքերը փակ, կարապի երգ, արջի ծառայություն

50 **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***քրտինքը հողին խառնել*** - հողի վրա տքնաջան աշխատել
2) ***փորում սիրտ չմնալ*** - սաստիկ վախենալ
3) ***անձյուն ձմեռ*** - խեղճ, անճարակ մարդ
4) ***գլխին ջուր մաղվել*** - զվարճանալ

51 **Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.**

1) ապօրինաբար= ապ+օրին (օրեն)+ա +բար
2) բաժանմունք= բաժան+մունք
3) երկարաքղանցք= երկար+ա+ք(ու)ղ+անց+ք
4) ունկնդրում= ունկն+ դ(ի)ր+ում

52 **Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն երկու ածանց:**

1) անդանակ, առաձգական, աշխատանքային, արդարացիորեն
2) առանձնապես, ապաշխարանք, անարդյունավետ, բաղդատական
3) ապացուցում, ապխտել, առանցք, արգելակում
4) անքանակ, անփարատելի, շրջանային, անարժան

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) հայրանուն, սուրանկյուն, աշուն, խիզախություն
2) վարժություն, ազգանուն, հենասյուն, բութանկյուն
3) շրշյուն, ծանրություն, ամառ, մաքրություն
4) աղջիկ, տոհմանուն, գալուստ, փոստատուն

54 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

1) Անցավ կյանքս մի գիշերվա երազի պես:
2) Օրերս Երևան է ժամանելու նշանավոր երաժիշտը:
3) Ինքս էլ չիմացա՝ ինչպես հայտնվեցի մի մութ այրում:
4) Օրս այդպես էլ անիմաստ անցավ:

55 **Տրված նախադասություններում քանի՞ սոսկածանցավոր բայ կա:**

- Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք:
- Մոռացել էր արքան, վերացել էր կարծես,
  Էլ բանտ ու վիշտ նրան չէին մտահոգում:
- Որսի էին ելել նրանք միասին,
  Մի քարայծ էր դյութել նրանց երկուսին,
  Բայց փախել էր, փնտրում էին, ու չկար:
- Եվ ներկարար աշնան հետքով
  Ինքը ձմեռն է մոտենում:

1) չորս
2) հինգ
3) ութ
4) վեց

56 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Օրերը ցրտել են, իսկ Արարատյան դաշտում դեռ բերքահավաք է:
2) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:
3) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:
4) Մեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:

57 **Ո՞ր նախադասությունն է բարդ:**

1) Ոչինչ չէր երևում՝ ո՛չ հինավուրց վանքը, ո՛չ մերձակա ավերակները, ո՛չ ծառերը:
2) Երբեմն պատահում էր՝ իմ վաստակածը քիչ էր լինում:
3) Նրա մոտ գալիս էին մարդիկ՝ տեսնելու հրաշագեղ այգին, լսելու այգեգործի իմաստուն խորհուրդները:
4) Գևորգը որոշեց այլևս չխառնվել նրանց վիճաբանություններին:

58 **Ո՞ր նախադասության մեջ բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
2) Այս գեղգեղանքը սիրավառ սրտի մի ամբողջ հեքիաթ էր մի դյութական հեքիաթ ծաղիկների բույրով ներդաշնակված:
3) Մի աղջիկ իր ընկերուհիների հետ անցավ իբրև մի թարմագեղ գարուն:
4) Ծերունի մի դերվիշ ճակատն արևառ եկավ որ սֆինքսից հարցումներ անի:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**

1. Նա ավելի թիֆլիսյան կինտո էր հիշեցնում, որը թյուրիմացաբար կամ պատահմամբ ժամանակավորապես կառապանի պաշտոն էր ստանձնել:
2. Հենց հարևանները չգիտեին՝ ինչպես հանգստացնեին ծերունուն պառավի մահից հետո:
3. Այն, որ բարեկամները այդ երիտասարդի երեսը օրերով չէին տեսնում, զարմացնում ու զայրացնում էր բոլորին:
4. Նրանց բաժանման հիմնական պատճառը հենց թերևս այն էր, որ յուրաքանչյուրը իբրև թե ուզում էր օգնել, բայց իրականում ոչինչ չէր անում:

ա. ձևի պարագա
բ. որոշիչ
գ. ուղիղ խնդիր
դ. ստորոգելի
ե. ենթակա

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
4) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա

60 **Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Ինչ որ իրեն պետք էր լինում, նա այդպես կատակով վերցնում էր:*
Իրեն պետք եղածը նա այդպես կատակով վերցնում էր:
2) *Նա հետևում էր, թե ինչպես է աղջիկը շշերը դասավորում սփռոցի վրա:*
Նա հետևում էր շշերը սփռոցի վրա դասավորող աղջկան:
3) *Երևում էր՝ ինչպես է հանդերի վրա աղեղ տալիս հնձվորի գերանդին:*
Երևում էր հնձվորի՝ հանդերի վրա աղեղ տվող գերանդին:
4) *Եթե հեռանալը հեշտ լիներ, Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ գյուղից:*
Գյուղից հեռանալը հեշտ լինելու դեպքում Գրիգորյանը վաղուց հեռացած կլիներ:

61 **Ո՞ր նախադասության մեջ բուք պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նա երևում է վաղուց էր ճանաչում այդ մարդուն չզարմացավ նրա արարքից:
2) Չգիտեինք աշխարհն ինչ է մարդն ինչ է
   Մենք դարդի մեջ չգիտեինք դարդն ինչ է ...
3) Տղան կանչում էր հորը իսկ նա ձորն իջնելով այլևս չէր լսում որդու կանչը:
4) Նրա առաջ ծառացել էին լուրջ խնդիրներ պետք է բնակարան գտներ նաև աշխատանքի մասին պիտի հոգար:

62 **Բանաստեղծական ժողովածուներից ո՞րը ումն է:**

ա. «Նոր տաղեր»	1. Ե. Չարենց
բ. «Գիրք ճանապարհի»	2. Ավ. Իսահակյան
գ. «Երգեր ու վերքեր»	3. Հ. Սահյան
դ. «Որոտանի եզերքին»	4. Մ. Մեծարենց

1) ա-4, բ-1, գ-2, դ-3
2) ա-2, բ-3, գ-1, դ-4
3) ա-4, բ-2, գ-1, դ-3
4) ա-3, բ-1, գ-4, դ-2

63 **Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:**

«Երբեք Հաճի աղան այդպես անխնամ չէր փոխել քայլերը իրենց տնից խանութ գնալիս: Այն Հաճի աղան, որի՝ փողոցով անցնելն իսկ մի հանդես էր. աղայակա՜ն»:

1) «Նեղ օրերից մեկը», Նար-Դոս
2) «Սպիտակ ձին», Ակսել Բակունց
3) «Ավելորդը», Դերենիկ Դեմիրճյան
4) «Քառս», Ալեքսանդր Շիրվանզադե

64 **Պնդումներից քանի՞սն են սխալ Ալեքսանդր Շիրվանզադեի «Քառս» վեպի հերոս Միքայելի վերաբերյալ:**

- Նրան զայրացնում էր Շուշանիկի՝ այդ աղքատ աղջկա՝ իրեն անհասկանալի հպարտությունը, ինչպես նաև Սմբատի նկատմամբ դրսևորած համակրանքը:
- Նա կանանց վերաբերվել էր նոր հագուստի պես. դուր չէր եկել կամ չէր սազել՝ դեն էր նետել և նորը ձեռք բերել:
- Դանակահարությունից հետո անգամ չի զղջում իր սխալ վարքագծի համար:
- Շուշանիկի նկատմամբ համակրանք զգալով՝ տանջվում էր նրա արհամարհանքից:

65 **Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավանկ.**

վազքուղի, սնապարծ, բարձրուղեշ, հայրենադարձ, ագեվազ, տարեդարձ, խրձաձև, պնդօղակ, ուսումնատենչ, հուշարձան, հպանցիկ, հարցասեր:

66 **Տրված հատվածներում դերանունով արտահայտված քանի՞ պարագա կա:**

- Քույրս տարամերժ ձայն տվեց, անցավ.
  -Քեզ որտե՞ղ թաղեմ, վի՛շտ իմ մոլեգին,
  Ինչո՞վ բուժեմ քեզ, անբուժելի՛ ցավ:
- Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր
  Հրեղեն խոսքեր կռեմ ու խնդում,
  Լսեմ հաղթական մարտի ցնծություն:
- Ինչո՞ւ է այսպես սիրտս մղկտում,
  Այսպես, նոյեմբե՛ր, քո հողմի նման
  Լալիս անդադար և աղեկտուր,
  Կարծես նեղ լինի աշխարհն անսահման:
- Որքա՜ն փոխված եք, պճնված ճոխ,
  Ճեմում եք որպես դշխո հպարտ:

67 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ չկա:**

Մի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ Ղուբայից, ուր լինում էր տարվա մեծ մասը. նա, իհարկե, բարկացավ ինձ վրա, երբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուգն արարքի մասին:

1. **իհարկե** - վերաբերական, **երբ** - հարաբերական դերանուն
2. **նրան** - անձնական դերանուն, տրական հոլով, **բարկացավ - ա** խոնարհման պարզ բայ, չեզոք սեռ
3. **հաղորդեց** – **ե** խոնարհման պարզ բայ, ներգործական սեռ, **մասին** –կապ, հետադրություն
4. **մի քանի** - անորոշ դերանուն, **անցած** – հարակատար դերբայ, ածանցավոր
5. **վերադարձավ** – սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, **լինում էր** - անկանոն բայ, ներգործական սեռ

68 **Նշել այն մտքերի համարները, որոնք *չեն* հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Էյֆելյան աշտարակը ժամանակին եղել է աերոդինամիկայի, այսինքն՝ մարմինների անկման ժամանակ օդի դիմադրությունն ուսումնասիրող գիտության, ինչպես նաև ֆրանսիական ռադիոյի կենտրոնը: Այդտեղ կատարված տարատեսակ փորձերով են խորազնին ուսումնասիրվել օդերևութաբանական շատ հարցեր: 19-րդ դարի վերջերին աշտարակը ռադիոհաղորդումների հեռարձակման փորձերի կենտրոն էր, իսկ հազար ինը հարյուր քսաներկու թվականին այստեղից հաղորդվեց առաջին ռադիոհամերգը: Երեք տարի անց աշտարակից կատարվեց հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը: Աշտարակի բարձրությունը երեք հարյուր մետր է: Իհարկե, ժամանակին նման բարձրությունը ռեկորդային էր, իսկ այսօր այն դրանով չի ապշեցնում, բայց Էյֆելյան աշտարակն իր յուրօրինակ գրավչության շնորհիվ մնում է զբոսաշրջիկների նախընտրած վայրը, և տարեկան այդտեղ մի քանի միլիոն մարդ է այցելում:

1. Աշտարակը եղել է աերոդինամիկայի և ֆրանսիական ռադիոյի կենտրոնը, որտեղ կատարված տարատեսակ փորձերով են ուսումնասիրվել օդերևութաբանական բոլոր հարցերը:
2. 20-րդ դարի քսանական թվականներին Էյֆելյան աշտարակից է կատարվել հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը:
3. Էյֆելյան աշտարակի երեք հարյուր մետր ռեկորդային բարձրությունը այսօր էլ ապշեցնում է տարեկան այդտեղ այցելող մի քանի միլիոն զբոսաշրջիկների:
4. Ամենասկզբում աշտարակը եղել է հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման կենտրոնը, որտեղ էլ կատարվել են առաջին փորձերը:

69 **Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1. շրթունք, 2. անկյուն, 3. անջատ, 4. դիմում, 5. գրգիռ, 6. ցանցկեն, 7. վրիպակ, 8. անձավ, 9. աշխատանք:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Անորոշ դերբայը հոլովվում է ***ու*** արտաքին հոլովմամբ և կազմում սահմանական եղանակի ժամանակաձևերից երկուսը:
2. Ժխտական ձևաբայով կազմվում են միայն ենթադրական եղանակի ժխտական բայաձևերը:
3. Անկանոն բայերը խոնարհման հարացույցի ոչ բոլոր ձևերում են դրսևորում անկանոնություն:
4. Բոլոր կանոնավոր բայերի անկատար ձևաբայը կազմվում է ***ում*** վերջավորությամբ:
5. ***Ե*** խոնարհման պարզ և պատճառական ածանց ունեցող բայերի անորոշ դերբայը և վաղակատար ձևաբայը ձևով նույնն են:
6. Ոչ բոլոր անկախ դերբայները կարող են հանդես գալ գոյականաբար, հոլովվել և կատարել գոյականին բնորոշ շարահյուսական պաշտոններ: